



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐ-
ԺԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԽԵՒԳ. ԻԸ. ՏԱՐԻ.

ՀԱՄԱԲ ՎԵՅՇԵՐՈՐԳ

ՅՈՒՆԻՍ 1895 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

«Նկայք շինեսցուք սուրբ զխորանն
լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
ի Հայաստան աշխարհի»:



Այն աշխարհում, ուր հին ա-
ւերակ նոր աւերակին տեղի է
տալիս, անընդհատ ուր չկայ
դիւթէ մի հաստատութիւն, հասարակաց բա-
րօրութեանը ծառայող, ժողովուրդի հոգևոր
գաղափարական բարիքները պահպանող և շա-
հեցնող մի շէնք, որին ձեռք տալը վտանգա-

ւոր շինէր, որի խարխուլ պատերը ամենա-
թեթեւ մի շարժումից մինչև ի հիւժ՝ չցնցուէին,
երանի՛ կրկին մի անգամ իրրև երկնային նոր
պատգամ հնէր ամեն հայի ծանօթ լուսաւոր-
չեան այս հին քարոզը զիւղէ գիւղ, քաղաքէ
քաղաք անցնէր և իրրև սթափեցուցիչ մի յու-
շարար ձայն ի դործ, ի շինութիւն հրաւիրէր
ամենքին: Տասն և վեց երկար դարեր առաջ,
երբ այս հրաւերն առաջին անգամ լսուեցաւ
Արարատեան դաշտում, ոտքի կանգնողը հրա-
կայադօր մէկ արքայ էր, իւր իշխաններով, իւր
զօրարանակով մէկտեղ, անձամբ փորեց նա
հիմունքը, իւր յաղթական ուսերի վերայ

քարեր բերաւ այն շինուածքի համար որ լուսոյ խորան պէտք է լինէր անսպառ լոյս սփռէր Հայաստան աշխարհին: Ժամանակն անցաւ ու աւերակներ թողեց իւր ետեւից: հսկաների և իշխանների տեղը անտէրունչ մի ժողովուրդ, դաժաճ սերունդ եկաւ բռնեց, անդոր և անարժան կարծես անցեալի ժառանգութիւնը պահպանելու: սակայն այն շինուածքը որի վերայ հայրերը աշխատել են երկրաւոր զօրութեան վերայ չէ հիմնուած: Տրդատի բերած քարերը չեն նորա բուն հաստատութիւնը կազմում: այն ոգին որ երբեմն Արարատի լեռները դաշտացրեց, ձորերը հարթեց, նոյն այն ոգին այսօր էլ կարող է թրդուկներից հերոսներ պատրաստել, աւերակը չէն դարձնել: Սկզբնական բարբառ դարձած խօսում է նա մեր սրտի, մեր հոգու հետ, մեր հայրենիքի ամեն մի անկիւնից, ամեն մի բլուրի վերայից, գետը որ խոխոջում է, տերեւը որ սոսափում՝ նոյն հին երգն է միշտ երգում: «Հայ լճորդ, քո կորուստը մօտիկ է», սեփափիր, եր միահամուռ ժողովրդական մի շարժում, ազգովին համերաշխ զործունէութիւն, անցեալի թողածը պահելու, աւերակը չէնցնելու, ընդհանուր ուժով հասարակաց փրկութեան չէնքը կառուցանելու բռնն ձգտումը միայն քո կեանքն ապահովել կարող է: Ելնելու բան շատ կայ, անթիւ են վերքեր, որոնց վերայ ձեռք դնել՝ բուժել պէտք է: եկեղեցիք, կրթարաններ, բարեգործական հիմնարկութիւնների առանկն և հրապարակային կեանք՝ ամեն ինչ երեսի վերայ ընկած է, սրտացաւ հոգատարութեան կարօտ: ամեն օր անդադար նոր գինի է լցուում հին տկերի մէջ, փտտում, ձեղքձեղքուում է հինը՝ պայթել սպառնում, նոր տկեր են պէտք, նոր շէնքեր, նոր կազմութիւն . . . Աւահա՛ Սայր Սիոնի գազաթից Հայաստանի մեծ Առաւորիչը հրաւեր է կարգում ի սփռոս աշխարհի ցրուած իւր զաւակներին: Այկայք, եկայք շինեցուք: մի շինուածք, որ ներքուստ չէն է եղել միշտ է և պէտք է մնայ մեր ներքին հոգեւոր վերաշինութեան իսկա-

կան հիւճն ու պատուարը: մի շինուածք, որի յատկազորը Լեքը՝ աստղերի վերայ իշխող Տէրն է դժել, անանց յաւիտենական մի նպատակի համար սահմանել: շինելու բան շատ կայ, բայց մին է ամենից կարեւորը: սիրան է կենդանութեան զործարան, կեդրոնից պէտք է սկսի վերածնութեան, վերանորոգութեան զործը:

Ս. Լճմիածնի տօնը այն նշանաւոր օրն է տարուայ մէջ, որ յիշեցնում է հայ եկեղեցւոյ ամեն մի անդամի, թէ նա իւր հոգեւոր կեանքի մի կեդրոն ունի, թէ այդ կեդրոնի կենդանութիւնը, նորա հետ կենդանի մի կապ պահելը նոյնչափ անհրաժեշտ է, որչափ հայի ինքնուրոյն ազգային, եկեղեցական կեանքի պահպանութիւնն է անհրաժեշտ: Սկզբ շատ ենք խօսում առհասարակ եկեղեցու նշանակութեան մասին, ազգի հաստատութեան գլխաւոր սիւններից մէկը, գոյութիւն անհրաժեշտ մի պայմանն ենք անուանում նորան, և այդպէս դառելով սովորաբար չենք մտածում լրջօրէն, թէ ինչ է նշանակում ազգային կեանք, ի՞նչ է նշանակում եկեղեցի, ի՞նչով են իրար հետ կապուում ի՞նչ կողմերով կարեւորութիւն ստանում, մեզ համար Սեր հայրերը, որ եկեղեցի և ազգ բառերի մէջ խտրութիւն չէին գնում, որ աշխարհի ծայրերից Ս. Լճմիածին ուխտ էին գալիս, նուէրներ էին ուղարկում, նորանից կտրուած լինելը մահու չափ դառն էին համարում իրենց համար՝ անշուշտ մեզնից պակաս համայնական զգացում, ազգային ինքնաճանաչութիւն չունէին: Արքայ գիտէին, որ նոյն հոգեւոր աւազանի մէջ մըկրտուած լինելը Ս. Լճմիածնից ընդունած սրբալոյս միւռոնի դրոշմը ճախտի վերայ կրելը՝ հայութեան ամենապարզ նշանն է, ամենակարեւոր պայմանը: Աշխարհի վերայ ոչ մի համայնք ոչ մի ընդհանրական զործ լոկ տեսութիւնների վերայ չի հիմնուում որպէս զի մարդիկ միատեղ ժողովուրն, ազգ, ընդհանրութիւն կազմեն, հարկաւոր է որ նոքա երկար ժամանակ միասին ապրած լինին նոյն

կեանքով, նոյն սկզբունքներով. հարկաւոր է որ նոքա իրենց միութեան մի ներքին հոգեւոր կապ, մի արտաքին յայտարար նշան ունենան: Այն ընդհանուր կեանքը, որով ապրում է զարերէ, ի վեր հայ ժողովուրդը զանազան աշխարհներում, զանազան պայմանների ներքոյ, ազգային եկեղեցուն առանձնապատուկ կեանքն է. միայն եկեղեցին կարող է այնպիսի ընդհանուր սկզբունքներ տալ, որոնցով պէտք է առաջնորդուի ամէն մի երկրի ինքնաձանաչ հայ. միայն եկեղեցին ունի այնպիսի արտաքին նշաններ և հոգեւոր կապեր, որ նոցա մի միութիւն կազմելը արտապատում են և զգալ տալիս: Եւ այդ բոլոր կապերի հանգոյցը Ս. Իջմիածինն է. Ամենայն Հայոց Աթոռիկոսն է կենդանի ներկայացուցիչը այն նուիրական գաղափարի, որ ի սփիւռս աշխարհի տարածուած բոլոր հայերը մի հոգեւոր միութիւն են կազմում, մի պատմական ժողովուրդ, որից բաժանուող իւրաքանչիւր անհատ կորցնում է գոյութեան իրաւունքը և կեանքի նպատակը՝ ինչպէս մայր բնից կտրուած մի ճիւղ, չոր խռիւների կարգին է անցնում:

Ահա թէ ինչու խորհրդաւոր է և բազմաբովանդակ Լուսաւորչեան շարականի ազդարար ձայնը: Աեդրոնի շինութիւնը և կենդանութիւնը անհրաժեշտ է ամբողջի պահպանութեան համար. բայց նա ամայի է և խրթնացած վիճակի մէջ: Հինութիւն պէտք է ոչ արտաքուստ միայն, այլ և ներքուստ. դուցէ արտաքին խրթնութեան գլխաւոր պատճառն էլ ներքին թերութիւններն են. սակայն անհրաժեշտ է, որ մէկը սկսելու համար նախ միւսը լրացուի: Հուսով կըողրի Սայր Աթոռի գոյութեան մի մեծ և նշանաւոր դարաշրջանն ևս. իսկ Սիւրբ Իջման տաճարը զեռ ողբալի անցեալն է յիշեցնում, աւերիչ ժամանակի ամօթարեր հետքերը կրում, նորոգողի ձեռքը ամենից առաջ այդ տեղ պէտք է գործունէութեան նշան ցոյց տայ: Որտեղից պէտք է մեկնուի այդ նորագոյ ձեռքը՝ յայտնի է. բաւական է հարցը

դնել, որ ամէնքը միասին դէպի նոյն անձը, դէպի Ս. Իջմիածնի միաբանութիւնը, դէպի հոգեւոր դասը ցոյց տան: Հինեցէք, ասում ենք մենք. «Ակայք շինեսցուք»՝ կանչում էին մեր հայրերը. հասարակաց գործի համար ամէնքը պէտք է աշխատեն, ամէն Հայ պատուոյ խնդիր պէտք է համարէ մի քար էլ իւր կողմից դնել լուսոյ այն խորանի պատերում, որտեղից լոյս է ծագել Հայաստան աշխարհին: Մենք ամէնքս խոտապահանջ ենք և թերահաւատ, ամէնքս տրամադիր ընդհանուրի պակասութիւնները ուրիշի վերայ ձգելու, ամէն մեղք, ամէն հոգս այն անձերի վերայ բարդելու, որոնք նախախնամութեան անօրէնութեամբ կամ բաղդի բերամար հասարակաց գործի ղեկավար և ներկայացուցիչ են կարգուած. մինչդեռ իսկական ինքնաձանաչութիւնը ճշմարիտ համայնական զգացումը ուրիշ կերպ պէտք է արտայայտուէր: Թող ամէն ոք իւր պարտքը կատարէ, շինէ որքան կարող է և երբեք քանդելու ձգտում ցոյց չտայ, շինէ նոյն իսկ երբ ուրիշների քանդելը տեսնում է և չյուսահատի՝ այն ժամանակ անպատճառ աւերակը շէնին տեղի կտայ և հասարակաց փրկութեան շինուածքը նախկին շքեղութեամբ կկանգնի. այն ժամանակ Ս. Իջմիածինն էլ կշինուի ներքուստ և արտաքուստ:

Կ. Վ.



Կ Ե Ն Դ Ը Ն Ո Ի Թ Ի Ը Ն Ս Ի Ի Ն Ը.

Ս. Իջմիածնի հաստատութեան հիմնաքարը դրուեցաւ այն ժամանակ, երբ փուլ եկաւ հեթանոսութեան հակայական շէնքը: Վաղուց արդէն բուն էին դրել այդ շէնքի մէջ անտարբերութիւնն և գաղափարի շփոթութիւնը, որոնք իբրեւ անմեռ որդեր կրծում և մաշում էին նորա հիմունքը. վաղուց արդէն մոլորութեան և տգիտութեան սեւաթոյր քողով ծածկուած և խորին թմրութեան մէջ ընկղմած էր հայ ժողովուրդը, կրելով հոգեւոր